17 մայիսի 2012 թվականի N 619 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 4-րդ կետի «ժ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի վարչությունների պետերին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին, մաքսատների պետերին և մաքսային կետերի պետերին»,

բ. 4-րդ կետի «ժա» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 5.6-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ 207 ծառայողական ավտոմեքենա:»,

դ. 5.6–րդ կետի «գ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 11-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ կետով.

«12. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ, սույն կետում՝ ՊԵԿ) սպասարկող ծառայողական ավտոմեքենաները հատկացվում են ՊԵԿ-ի օպերատիվ հետախուզության վարչության բաժիններին, ՊԵԿ-ի նախագահի կողմից հաստատված ցանկում ընդգրկված բաժիններին (հատուկ և իրենց գործառույթների շրջանակներում ստուգումներ ու օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավասություն ունեցող) և ըստ անհրաժեշտության՝ հատուկ բաժնին:».

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

20.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	284	77	207

»,

բ. 21-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ընդամենը	1666	639	1027

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ